**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՐԱՅԻ**

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԴԱՎԱՆԱԿԱՆ ԵՎ ՍԱՍԱՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ (395-642)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման
ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2018**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր **Վարդանյան Վ. Մ.**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր **Եղիազարյան Ա. Ս.**

պատմական գիտությունների թեկնածու **Քարիմյան Լ. Ռ.**

Առաջատար կազմակերպություն՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հուլիսի 16-ին, ժամը $13^{00}$-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան, պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունիսի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մուրադյան Հ. Ղ.

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**: Շուրջ երկու հազարամյա պատմությամբ քրիստոնեությունը վաղուց ի վեր դարձել է հասարակական կյանքի անփոփոխ այն հաստատուններից մեկը, որը վիթխարի դեր է կատարել ինչպես հոգևոր, այնպես էլ՝ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում: Ժողովուրդների կյանքում իր դարավոր կենսագործունեության արդյունքում քրիստոնեությունը վիթխարի ազդեցություն է ունեցել ոչ միայն հասարակական և անհատական գիտակցության, այլև՝ ազգային հոգեկերտվածքի, ինքնության, հոգեբանության և գաղափարախոսության ձևավորման ու գործառնական առանձնահատկությունների վրա: Հայ ժողովրդի և Հայ եկեղեցու պատմության կտրվածքով վերոնշյալ գործոնների համակարգված գիտատեսական ուսումնասիրությունն էլ պայմանավորել է «Հայաստանը Բյուզանդական կայսրության դավանական և Սասանյան Պարսկաստանի կրոնական քաղաքականության ոլորտում (395-642)» թեկնածուական ատենախոսության արդիականությունը:

Ատենախոսության մեջ ուսումնասիրության են ենթարկվում հայ ժողովրդի հասարակական և հոգևոր կյանքի պատմական զարգացման մի շարք հանգուցային հարցեր, որոնց շրջանակում վիթխարի դեր է կատարել նաև Հայոց եկեղեցին: Աշխատանքում արդիական է նաև նրանով, որ քննարկվող հիմնահարցերի վերաբերյալ համարժեք ուսումնասիրություններ դեռևս չեն կատարվել, իսկ հիմնահարցի որոշ տեսանկյուններ ուսումնասիրվել են բացառապես ընդհանուր խնդիրների շրջանակներում և հատվածական են: Ինքնին հասկանալի կերպով այդ հարցերի նկատմամբ խորհրդային շրջանում ուշադրությունը միակողմանի էր և սահմանափակված գաղափարախոսական պարտադրանքով: Դրանց օբյեկտիվ, հավասարակշռված և հայեցակարգային լուծումները հնարավոր դարձան միայն Հայաստանի անկախացումով կյանքի կոչված հասարակական կյանքի փոխակերպումների արդյունքում: Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև տեսական և գործնական այլ գործոններով:

Հայտնի է, որ հասարակության հոգևոր կյանքի կայուն և վերարտադրվող գործոններից մեկը կրոնն է: Հայ ժողովրդի IV-VII դարերի քաղաքական և հոգևոր պատմության շրջագծում

Հայոց եկեղեցու դավանական դիրքորոշման և դրա պատմական նշանակության գիտատեսական ուսումնասիրությունը արդիական է նաև այն տեսանկյունից, որ թույլ է տալիս քննական մոտեցմամբ գնահատել Հայոց եկեղեցու հասարակական դերը: Այն հրատապ է նաև, քանի որ եկեղեցական տարբեր կառույցների և նվիրապետական կենտրոնների նեղ շահերով առաջնորդվող ջատագովների կողմից Հայ եկեղեցու պատմությունը ներկայացվում է նենգափոխված տեսքով: Այդ մոտեցումների վերլուծական մերժմամբ քննարկվող հիմնահարցերը ներկայացվել և գնահատվել են նաև քրիստոնեական քաղաքակրթական արժեքների համատեքստում:

Քննարկվող հիմնահարցերի պատմագիտական ուսումնասիրությունն ունի նաև գիտագործնական նշանակություն: Թեմայի շրջանակներում քննարկվող հիմնախնդիրներն առնչվում են հայ ժողովրդի ազգային նկարագրի, ինքնության և հոգեկերտվածքի հիմնահարցերին և վերլուծական արդյունքները կարող են նպաստել եկեղեցու դավանական զարգացումների և քննական վերլուծության, ինչպես նաև՝ կրոնական արժեքների փոփոխությունների համակողմանի օբյեկտիվ արժևորման գործին:

Ատենախոսության մեջ քննարկվող հիմնահարցերը արդիական և հույժ կարևոր են նաև համաշխարհայնացման արդի գործընթացների և աստիճանաբար ուրվագծվող քաղաքակրթությունների հակազդեցության վտանգի համատեքստում: Քանի որ կրոնը քաղաքակրթությունը բնութագրող կարևորագույն տարրերից է, այդ տեսանկյունից ևս խիստ հրատապ է Հայոց եկեղեցու պատմադավանական ընթացքի տեսական ուսումնասիրությունը և հասարակական դերի օբյեկտիվ գնահատումը: Աշխատանքը որոշակի նշանակություն ունի նաև հայ ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքում Հայոց եկեղեցու դերի համակարգված ուսումնասիրության տեսանկյունից, ինչը կարևոր է Հայաստանում աղանդավորության տարածման և արմատավորման տեսքով Հայոց եկեղեցուն ուղղված մարտահրավերների համատեքստում:

**Գիտատեսական և գիտագործնական նշյալ խնդիրների պատմագիտական, կրոնագիտական, պատմաաստվածաբանական և պատմադավանական համակարգային վերլուծությունն էլ պայմանավորել է «Հայաստանը Բյուզանդական կայսրության դավանական և Սասանյան Պարսկաստանի կրոնական քաղաքականության ոլորտում (395-642)» թեկնածուական ատենախոսության արդիականությունը**:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ** ընդգրկում են 395-642 թվականները՝ բյուզանդական եկեղեցու և զրադաշտական կրոնի ոտնձգությունների դեմ հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու պայքարի հիմնական շրջանը: Այն թելադրված է փոխկապակցված մի շարք գործոններով:

Պատմական այս փուլը դեռևս ամփոփ վերլուծության չի ենթարկվել ո՛չ հայագիտության, և ո՛չ էլ հայ աստվածաբանական և պատմադավանական գրականության մեջ: Հրապարակում շրջանառվում են հիմնականում ընդդիմադիր քաղկեդոնական տեսակետները, որոնք աչքի են ընկնում կամայական և խեղաթյուր մեկնաբանությամբ, իսկ Հայոց եկեղեցու դավանական դիրքորոշումը կտրվում է իր ուղղադավան հիմքերից և ծայրահեղ միակողմանի մոտեցմամբ նույնացվում է միաբնակության հերձվածի հետ: **Այդ ամենի արդյունքում կեղծվում և նենգափոխվում է ոչ միայն Հայոց եկեղեցու դավանական էությունը, այլև՝ բուն քրիստոնեության պատմությունը**:

Այդ մոտեցումները փաստարկված մերժելու, ինչպես նաև պատմական իրադարձությունների ընթացքն իր ամբողջության մեջ ներկայացնելու համար աշխատանքում փաստական նյութի և սկզբնաղբյուրների վերլուծության հիման վրա քննարկվել և գնահատվել են դարաշրջանին բնորոշ պատմական և դավանական իրողությունները, ինչը թույլ է տվել առանց որևէ հավելման կամ նվազեցման ամբողջության մեջ ներկայացնել քննարկվող հիմնահարցերը:

**ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ:** Հայագիտության մեջ մինչ օրս 395-642 թվականների կրոնական և կրոնաքաղաքական արտաքին մարտահրվերների դեմ հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու պայքարի, դրա հիմքում ընկած հոգևոր, դավանական և քաղաքական գործոնների վերաբերյալ որևէ ամբողջական վերլուծական աշխատանք չի կատարվել:

Վերելք ապրող հայ աստվածաբանական մտքի կողմից այդ հարցերի որոշ տեսանկյունների սեղմ և նկարագրական ուսումնասիրության առաջին փորձերը կատարվել է միայն 1890-1910-ական թվականների միջակայքում, որոնք հիմնականում նկարագրական են և սահմանափակված ընդհանուր խնդիրների շրջանակներով[1]: Հայտնի պատճառներով

---

[1] Տե՛ս **Տեր-Միքելեան Ա.**, Հայաստանեայց եկեղեցին և Բիւզանդեան ժողովոց պարագայք, Մոսկուա, 1892, էջ 51-53, 56-57, **նույնի՝** Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու քրիստոնէականը (Բ հրատ), Ս. Էջմիածին 2007, էջ 171-172, 179-180, **Տէր-Մինասեանց Ե.**, Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ (հայկական եւ ասորական աղբիւրների համաձայն), (Բ հրատ,), Ս. Էջմիածին, 2009, էջ 53, 58-64, 69, 74, 80-81, 103, 110-112, 115, 206, 230, **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 356-357, 386-387, 576, 591, 631-633, 652, 711, 1725): Համեմատաբար ավելի ընդարձակ են նեստորականության նկատմամբ պատմաքննական մոտեցումները, տե՛ս **նույն տեղում**, էջ 354-357,567, 569, 575-576, 614-616, 626-628, 650-653, 752-758: Տե՛ս նաև **Կնիք հաւատոյ** դավանաբանական ժողովածուի **Կ. Տեր-Մկրտչյանի ներածությունը**, էջ LII-LIV, LVII-XCVIII, **նույնի՝** Հովհան Մանդակունի եւ Հովհան Մայրագոմեցի: **«Շողակաթ»** (Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու), Ա, Վաղարշապատ, 1913, էջ 84-113, **նույնի՝** Հայոց եկեղեցւոյ առաջին

խորհրդային կրոնագիտությունը այդ հարցերին չի անդրադարձել և դարաշրջանի հայագիտական աշխատանքներում և հոդվածներում աստվածաբանական և դավանաբանական բնույթի հիմնահարցերը կամ չեն քննարկվել, կամ դրանց նկատմամբ թռուցիկ անդրադարձ է կատարվել միայն «թույլատրելի սահմաններում»[2]: Որոշակի առաջընթաց նկատվել է միայն հետխորհրդային շրջանում, սակայն առաջին քայլերը լինելով, այս շրջանի հրատարակություններում նույնպես քննարկվող հիմնահարցերը ներկայացված են ընդհանուր խնդիրների համատեքստում[3]: Այդ հակիրճ տեսությունը փաստում է, որ հայագիտության մեջ մինչ օրս 395-642 թթ. կրոնական և կրոնաքաղաքական արտաքին մարտահրվերների դեմ հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու պայքարի, վերջինիս հիմքում ընկած դավանական և քաղաքական գործոնների վերաբերյալ ամփոփ աշխատանքներ դեռևս չեն կատարվել:

Այդ տեսանկյունից «**Հայաստանը Բյուզանդական կայսրության դավանական և Սասանյան Պարսկաստանի**

---

մասնակցութիւնը դաւանական վէճերի մէջ եւ Բաբգեն կաթողիկոս: **Տէր-Մկրտչեան Կ.**, Երկերի ժողովածու, պրակ Ա, Ս. Էջմիածին, 2008, էջ 71-79, **նույնի՝** Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի թուղթը: **Տէր-Մկրտչեան Կ.**, Երկերի ժողովածու, պրակ Ա, էջ 81-90, **Տէր-Մկրտչեան Գ.**, Հայ մատենագրութեան հնագոյն թուականները: **«Շողակաթ»** (Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու), Ա, Վաղարշապատ, 1913, էջ 154-163 և այլն:

[2] Տե՛ս **Տեր-Մինասյան Ե.**, Նեստորականությունը Հայաստանում 5-6 դարերում, Երևան, 1946, **նույնի՝** «Կնիք Հաւատոյ» ժողովածուն և Հայոց եկեղեցու դավանաբանական գիրքը Զ և Է դարերում, **Տեր-Մինասյան Ե.**, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 101-118, **նույնի՝** Բաբգեն կաթողիկոսի ժողովի թվականը, տեղը, Պատմա-բանասիրական հետազոտություններ, էջ 31-44: Տե՛ս նաև **Հարությունյան Ա.**, Սուրբ Սահակ Պարթևի և Կ. Պոլսի Պրոկղ պատրիարքի միջև փոխանակված դավանաբանական թղթերը Եփեսոսի ժողովից հետո, **«Էջմիածին»**, 1981, ժ, էջ 34-40:

[3] Տե՛ս **Պետրոսյան Ե.**, Հայ եկեղեցու Քրիստոսաբանությունը, Ս. Էջմիածին, 1995, **նույնի՝** Ս. Հովհան Օձնեցու ուսմունքը Քրիստոսի բնությունների մասին, **Սուրբ Հովհաննես Օձնեցի Հայրապետը եւ իր ժամանակը** (գիտաժողովի նյութեր), Ս. Էջմիածին, 2004, էջ 39-44, **Քրիստոնյա Հայաստան**, Հանրագիտարան, Երևան, 2002, էջ 67-68, 176, 237-238, 243-244, 494-496, 775-776 և այլն, **Տեր-Մինասյան Ե.**, Հայոց եկեղեցին, Ս. Էջմիածին, 2014, **Վարդանյան Վ.**, Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005, **նույնի՝** Հայոց եկեղեցին՝ նախարարական պետականության հենարան (428-630-ական թթ.), ՀՀ ԳԱ **«Լրաբեր հասարակական գիտությունների»**, 2015, թիվ 1, էջ 212-224, **Մելիքյան Կ.**, "Narratio de rebus Armeniae" հայ -քաղկեդոնական երկը վաղ միջնադարյան Հայոց եկեղեցու պատմության կարևոր սկզբնաղբյուր, Երևան, 2007, **նույնի՝** Հայոց եկեղեցու դիրքն Ընդհանրական քրիստոնեական եկեղեցու համակարգում IV-VI դարի I կեսին, Երևան, 2016:

**կրոնական քաղաքականության ոլորտում (395-642)»** թեկնածուական ատենախոսությունը նշված հիմնահարցերի **գիտատեսական վերլուծական ուսումնասիրության առաջին աշխատանքն է**: Նրանում առաջադրված և հիմնավորված տեսակետները նոր մոտեցումներ են բովանդակում նաև հայոց պատմությանը նվիրված աշխատանքների շարքում:

Հաշվի առնելով այդ ամենը և վերլուծական հիմք ունենալով պատմագիտության և կրոնագիտության տեսական ու մեթոդաբանական հիմնարար սկզբունքները՝ **ատենախոսության մեջ առաջադրվել են վերլուծական հետևյալ խնդիրները.**

- պատմագիտության մեթոդաբանության դիրքերից փաստական նյութի, սկզբնաղբյուրների և մատենագրության համակարգային քննական վերլուծությամբ ուսումնասիրել և գնահատել Հայաստանի և Բյուզանդական կայսրության 395-642 թվականների քաղաքական և միջեկեղեցական փոխհարաբերությունների հիմքերը:
- Փաստական նյութի և սկզբնաղբյուրների պատմագիտական և պատմա-կրոնագիտական վերլուծության դիրքերից վերհանել և քննարար արժևորել IV-V դարերում Հայաստանի նկատմամբ Սասանյան Պարսկաստանի կրոնական քաղաքականության էությունը և զրադաշտական կրոնի դերն այդ հարցում: Ճշգրտել և ամբողջության մեջ ներկայացնել զրադաշտականություն-Հայոց եկեղեցի հարաբերությունները:
- Պատմագիտության, տեսական և համեմատական կրոնագիտության մեթոդաբանության, պատմաաստվածաբանական և պատմադավանական հիմնարար սկզբունքների դիրքերից համակարգված քննական վերլուծության ենթարկել Բյուզանդական քաղկեդոնական եկեղեցուց Հայոց եկեղեցու պաշտոնական բաժանման հոգևոր և հասարակական պատճառները: Ավանդական կարծրատիպերի քննական վերլուծությամբ ցույց տալ այդ գործընթացի պատմական և հավատքային հիմքերը հանձին Դվինի 506 թ. և 554/555 թ. ժողովների դավանական դիրքորոշման:
- Փաստական նյութի և սկզբնաղբյուրների համակարգված պատմագիտական վերլուծության ենթարկել Հայաստանի նկատմամբ VI դարի պարսկա-բյուզանդական քաղաքականությունը, վերհանել և գնահատել այդ բնագավառում կրոնական գործոնի դերը և հետևանքները:
- Քրիստոնեաբանական-դավանական զարգացումների համատեքստում պատմագիտության, կրոնագիտության ու եկեղեցաբանության հիմնարար օրինաչափությունների դիրքերից համակարգային վերլուծության ենթարկել Հայոց եկեղեցու ներքին պառակտումների, մասնավորապես Վրաց եկեղեցու անջատման դրդապատճառները:
- Փաստական նյութերի, սկզբնաղբյուրների և վավերագրերի համեմատական վերլուծության հիման վրա

համակողմանի քննական արժևորման ենթարկել Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ VII դարի առաջին կեսի պարսկա-բյուզանդական քաղաքականության հիմքերը, վեր հանել և գնահատել կրոնական գործոնի դերը այդ զարգացումների համատեքստում:

***ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ***: Ատենախոսությունը շարադրվել է օբյեկտիվության դիրքերից՝ հիմք ընդունելով քննարկվող հիմնահարցերին վերաբերող սկզբնաղբյուրների, պատմական և եկեղեցական մատենագրության, ինչպես նաև մասնագիտական գրականության վերլուծության, համադրության և ընդհանրացման պատմագիտական, որոշ հարցերում նաև՝ կրոնագիտական մեթոդաբանությունը:

Օգտագործվել են նաև պատմաեկեղեցական, պատմադավանական, աստվածաբանական և եկեղեցագիտական հիմնարար սկզբունքները, ինչպես նաև վերլուծության, համադրության և ընդհանրացման տրամաբանական մեթոդները:

***ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ*** 395-642 թվականներին Բյուզանդական կայսրական եկեղեցու և զրադաշտական կրոնի դեմ մղված հայ ժողովրդի և Հայ Առաքելական եկեղեցու պայքարի **առաջին անգամ իրականացված ամբողջական և համակարգված պատմագիտական և կրոնագիտական վերլուծությունն է և որոշ հարցերի ու հիմնախնդիրների նորովի գնահատումը:**

**Ատենախոսության գիտական նորույթի տարրերից պետք է համարել այն, որ.**

► պատմագիտական վերլուծությամբ, ինչպես նաև կրոնագիտության և պատմադավանական հիմնարար սկզբունքների կիրառմամբ վերանայվել և ավանդական կարծրատիպային մոտեցումների քննական վերլուծությամբ նորովի է արժևորվել 395-642 թթ. Հայաստանում Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի կրոնաքաղաքական գործունեությունը և դրա ազդեցությունը Հայոց եկեղեցու և հայ ժողովրդի հոգևոր դիրքորոշման վրա:

► համեմատական վերլուծությամբ գնահատվել և տեսականորեն հիմնավորված բացահայտվել և գնահատվել են Հայոց եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքորոշման հոգևոր ու դավանական հիմքերը: Քննաբար վերանայվել և փաստարկված մերժվել են այս հարցում քաղկեդոնական մատենագրության կանխակալ և խեղաթյուր կարծիքները, ցույց է տրվել Հայոց եկեղեցու դավանական դիրքորոշման դերը և նշանակությունը հայ ժողովրդի ազգապահպանության և ազգահոգեբանական ինքնության հարատևման գործում:

► պատմագիտական համեմատական վերլուծությամբ վերանայվել և ավանդական կարծրատիպային մոտեցումների քննական վերլուծությամբ նորովի է արժևորվել VI դարում Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի

կրոնաքաղաքական գործունեությունը Հայաստանում և դրա ազդեցությունը Հայոց եկեղեցու և հայ ժողովրդի հասարակական հոգևոր կյանքում:

► պատմագիտական և կրոնագիտական համեմատական վերլուծությամբ արժևորվել է VII դարի առաջին կեսի Հայաստանի և Հայոց եկեղեցու ներքին կացությունը: Օբյեկտիվ քննական մոտեցմամբ արժևորվել են Հայոց եկեղեցու վարչական կառույցի պառակտման հիմքում ընկած հոգևոր և հասարակական գործոնները: Պատմաքննական վերլուծությամբ նորովի են գնահատվել այդ հարցում տեղ գտած միակողմանի, ծայրահեղ և կանխակալ մոտեցումները:

***ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ***: Հետազոտական աշխատանքի համար աղբյուրագիտական հիմք են հանդիսացել բազմաբովանդակ սկզբնաղբյուրներ, վավերագրերի ժողովածուներ, ինչպես նաև մատենագրական և պատմադավանաբանական ուսումնասիրություններ:

Հիմնահարցի քննական ուսումնասիրության հիմնարար նշանակություն ունեցող կարևորագույն սկզբնաղբյուր են հանդիսացել հայոց պատմության կոթողային աշխատանքները[4], ընդհանրական եկեղեցու պատմության հիմնարար սկզբնաղբյուրները[5], ինչպես նաև Հայոց եկեղեցու հայրերի աշխատանքներն ու դավանաբանական ժողովածուները[6]: Օգտագործվել են նաև հիմնահարցի հետ օրգանապես կապված օտար աղբյուրներ[7]:

---

[4] Տե՛ս **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն հայոց, Երևան, 1991, **Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց**, **թուղթս առ Վահան Մամիկոնեան**, Երևան, 1982, **Եղիշէ**, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1989, **Սեբեոս**, Պատմութիւն, Երևան, 2005, **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց**, Երևան, 1996, **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն հայոց, Երևան, 1961: Կարևորագույն սկզբնաղբյուր են հանդիսացել նաև **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկի, Մովսէս Կաղանկատուացու** և **Ուխտանէս եպիսկոպոսի** «Պատմությունները», տե՛ս **Մատենագիրք Հայոց**, հ. ԺԵ, գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, 2010:

[5] Տե՛ս **Четыре книги Евсевия Памфила, Епископа Кесарии Палестинской О жизни Блаженного Василевса Константина**, СПб., 1849; **Сократ Схоластик**. Церковная история. М., 1996; **Созомен Эрмій Саламинскій,** Церковная исторія, СПб., 1851; **Феодорит епископ Кирскій,** Церковная исторія. СПб., 1852; **Евагрий Схоластик,** Церковная история, СПб., 2010; **Феофилакт Симокатта**, История, М., 1957 և այլն:

[6] Տե՛ս **Սրբոյ Հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի Յանախապատում մատեանս լուսաւորեալ**, Ս. Էջմիածին, 1894, **Սուրբ Գրիգորի վարդապետությունը**, Էջմիածին, 2007, **Գիրք թղթոց, Մատեանագրութիւն նախնեաց**, Թիֆլիս, 1901, **Կնիք հաւատոյ**, Ս. Էջմիածին, 1914, **Վարդան Այգեկցի**, Գիրք հաստատութեան եւ արմատհաւատոյ, Երևան, 1998:

[7] Տե՛ս **Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին**, հ. 5, Բյուզանդական աղբյուրներ, Ա, **Պրոկոպիոս Կեսարացի**, Երևան, 1967, **Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին**, հ. 13, Բյուզանդական

Ատենախոսության մեջ քննարկվող հիմնահարցերի ուսումնասիրության գործում ընդհանուր ուղեցույց են հանդիսացել «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակության երկրորդ[8], ինչպես նաև Լեոյի «Հայոց պատմության» I և II հատորները[9]: Հայ-բյուզանդական հարաբերությունների վերաբերյալ օգտագործվել են Ն. Ադոնցի և Վ. Իսկանյանի, Բյուզանդիայի պատմության, ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ՝ Շ. Դիլի, Ֆ. Ուսպենսկու, Գ. Օստրոգորսկու և Ա. Վասիլևի հիմնարար աշխատությունները[10]: Իսկ Սասանյանների պատմության, արքունիքի ներքին և արտաքին քաղաքականության, V-VII դդ. պարսկա-բյուզանդական պատերազմների մասին՝ Թ. Նյոլդեքեի, Վ. Դմիտրևի և հեղինակավոր այլ աշխատություններ[11]: Ատենախոսության մեջ օգտագործվել են նաև քննարկվող հիմնահարցերի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ բովանդակող Ն. Մառի, Ն. Ակինյանի, Կ. Յուզբաշյանի, Գ. Բաբյանի աշխատությունները[12]:

---

աղբյուրներ, Դ, **Թեոփանես Խոստովանող**, Երևան, 1983, **Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին**, հ. 8, Ասորական աղբյուրներ, Ա, Երևան, 1976, **Մել իքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա (Ե-ԺԲ դար), Երևան, 1934, **La Narratio de rebus Armeniae** (ed., critique et commentaire **Garitte G.**), **Corpus Scriptorum Christianorum Orientalium.** V. 132, Louvain, 1952:

[8] Տե՛ս **Հայ ժողովրդի պատմություն,** հ. II, **Հայաստանը վաղ ֆեոդալ իզմի ժամանակաշրջանում**, Երևան, 1984:

[9] Տե՛ս **Լեո**, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. Ա. (Հին պատմություն), Երևան, 1966, **Նույնի՝** Հայոց պատմություն, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. Բ (Միջին դարեր), Երևան, 1967:

[10] Տե՛ս **Ադոնց Ն.,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987, **Իսկանյան Վ.**, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Երևան, 1991, **Դիլ Շ.**, Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, Երևան, 2005, **Успенский Ф.,** Исторія Византійской имперіи. Т. I, СПб., 1913; **Նույնի՝** История Византийской империи, Т. II, Первая половина, Л., 1927; **Նույնի՝** История Византийской империи VI-IX вв. М., 1996; **Острогорский Г.,** История Византийского государства. М., 2011; **Васильев А.,** История Византийской Империи, Т. 1, СПб., 1998, Т. 2, СПб., 1998;

[11] Տե՛ս **Նյոլդեքե Թ.**, Պատմութիւն Սասանեան Տերութեան, Վաղարշապատ, 1896, **Дмитриев В.**, «Всадник в сверкающе броне»: Военное дело сасанидского Ирана и история римско-персидских войн, СПб, 2008; **Ша‘бани Р.,** Краткая история Ирана, СПб., 2008; **Хуршудян Э.,** Армения и сасанидский Иран, Алматы, 2003:

[12] Տե՛ս **Марр Н.,** Кавказский культурный мир и Армения, Ереван, 1996, **Ակինեան Ն.**, Կիւրոն կաթողիկոս վրաց: Պատմութիւն հայ-վրացական յարաբերութեանց յեօթներորդ դարու մէջ, Վիեննա, 1910. **Յուզբաշյան Կ.**, Ավարայրի ճակատամարտից դեպի Նվարսակի պայմանադրությունը, Երևան, 1989, **Babian G.,** The relations between the Armenian and Georgian Churches, according to the Armenian sources, 300-610, Antelias-Lebanon, 2001:

Աղբյուրագիտական կարևոր սկզբնաղբյուրներ են հանդիսացել նաև տիեզերական ժողովների վավերագրային «Գործքերը»[13], ինչպես նաև տեղական և տիեզերական ժողովների վերաբերյալ հանրաճանաչ այլ ժողովածուներ[14]:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի կողմից: Աշխատանքի հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած գիտական 6 հոդվածներում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից և օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

**Ներածության** մեջ հիմնավորվում է հետազոտվող թեմայի գիտական հրատապությունն ու արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունը, ցույց է տրվում հիմնահարցի տեսական ուսումնասիրության աստիճանը, ձևակերպվում են հետազոտության վերլուծական խնդիրներն ու նպատակները, բացահայտվում է ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերը, հիմնավորվում է վերլուծական աշխատանքի գիտական նորույթը, հետազոտության ժամանակագրական սահմանները, տրվում աղբյուրների և գրականության տեսությունը:

**Առաջին՝ «ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴԱՎԱՆԱԿԱՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ՀԱՅՔՈՒՄ 395-550-ԱԿԱՆ ԹԹ» գլուխը** բաղկացած է 3 ենթագլխից:

**Առաջին՝ «Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական և քաղաքական փոխհարաբերությունները» ենթագլխում** սկզբնաղբյուրների և պատմական վավերագրերի վերլուծությամբ ցույց է տրվում, որ Բյուզանդական կայսրության ձևավորումից մինչև VI դարի 50-ական թվականների վերջն ընկած շրջանը քրիստոնեական այս տերության կողմից Հայաստանի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը աստիճանական փոփոխության է ենթարկվել խաղաղ գործակցությունից (Արկադիոս, Թեոդոսիոս II) դեպի կրոնաքաղաքական անտարբերություն (Մարկիանոս) և դավանական գործոնի առաջնության դիրքերից համագործակցության ձգտում (Զենոն, Անաստաս) և ապա՝ բացահայտ կրոնաքաղաքական հարկադրանք (Հուստինոս I և Հուստինիանոս I): Հիմնավորվում է, որ Հայաստանի նկատմամբ այդ դիրքորոշման հիմքում ընկած են եղել քաղաքական և

---

[13] Տե՛ս **Дѣянія Вселенскихъ Соборовъ**, T. I, Казань, 1910; **Дѣянія Вселенскихъ Соборовъ,** T. II, Казань, 1892; **Дѣянія Вселенскихъ Соборовъ,** T. IV, Казань, 1908:

[14] **Sacrorum conciliorum nova amplissima collectio** (ed. by J.-D. Mansi), T. III (anni 347-409), Austria: Graz, 1960; **Hefele K. J.,** Histoire des consiles d' après les documents originaux. Transled and revised by Henri Leclercq, Vol. II, Part I, Paris, 1907 և այլն:

կրոնաեկեղեցական գործոններ: Քաղաքական առումով կայսրության երբևէ «իրականություն չդարձած երազանքը» եղել է «... Հռոմեական աշխարհին» (Orbis Romanus) տիրելու անմիջական պայքարը և բյուզանդական միջին և ուշ փուլերում այդ գաղափարական սուպրեմատի պաշտպանությունը դարձել էր այն միջուկը, որի շուրջը պտտվում էր կայսրության քաղաքականությունը»[15]: Ազդեցիկ է եղել նաև կրոնական գործոնը: Երբ քրիստոնեությունը հռչակվեց Հայաստանի պետական կրոն, մերձեցում տեղի ունեցավ Հռոմի հետ: Բայց այդ մերձեցումը ծառայեցվեց միայն կայսրության կրոնա-քաղաքական շահերին[16]:

Փաստվում է, որ ընդհանրական եկեղեցու առկայության պարագային հայ-բյուզանդական հարաբերություններում դավանական հարկադրանքը սքողված է եղել: Իրավիճակը փոխվել է Կ. Պոլսի 381 թ. տիեզերաժողովի 3-րդ և ապա Քաղկեդոնի տիեզերաժողովի 28-րդ կանոնների ընդունումով, որոնցով Կ. Պոլսի աթոռին քրիստոնեական Արևելքում առաջնություն և կանոնական բացառիկ լիազորություններ են վերագրվել[17]: **Դրանով սկիզբ է դրվել նաև Արևելքի բոլոր եկեղեցիները իրեն ենթարկելու Կ. Պոլսի պատրիարքության դարավոր պայքարին**, որի իրագործմանը աջակցել են նաև բյուզանդական կայսրերը[18]: Բացասական հսկայական դեր է կատարել նաև 451 թ. Քաղկեդոնի տիեզերաժողովը, որի հաստատած քրիստոսաբանական երկաբնյա դավանաբանական սահմանումը եկեղեցական պառակտման պատճառ դարձավ[19]:

Հիմնավորվում է, որ արտաքին այդ մարտահրավերներին դիմակայելու ազդեցիկ գործոն դարձավ հայ գրերի գյուտը և հայալեզու մատենագրությունը: Իսկ **Արշակունիների թագավորության վերացումից հետո Հայոց եկեղեցին դարձավ երկրի հոգևոր և գաղափարական հենարանը և ժողովրդին միավորող համերկրային այն կառույցը**, որն ապահովեց հայ ժողովրդի հոգևոր և բարոյական համագոյությունը և էապես նպաստեց ազգի միասնությանը և գաղափարական ընդհանրությանը:

**Երկրորդ՝ «Զրադաշտականությունը և նրա ազդեցությունը Հայաստանի վրա» ենթագլխում** սկզբնաղբյուրների և

---

[15] **Острогорский Г.,** История Византийского государства. М., 2011, էջ 65.

[16] Տե՛ս **Իսկանյան Վ.**, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., էջ 45:

[17] Կ. Պոլսի 381 թ. Տիեզերական ժողովի մանրամասները տե՛ս **Дѣянія Вселенскихъ Соборовъ,** Т. I, էջ 93-126: Տե՛ս նաև **Дѣянія Вселенскихъ Соборовъ**, Т. IV, էջ 142-143, 149-150;

[18] Տե՛ս **История Византии в трех томах**, Т. I, էջ 267-269; **Кулаковский Ю.,** История Византии. Т. I, 395-518 гг., էջ 27-28, **Острогорский Г.,** История Византийского государства, էջ 122:

[19] Տե՛ս **Дѣянія Вселенскихъ Соборовъ**, Т. IV, **Соборъ Халкидонскій, Вселенскій Четвертый *(Окончаніе)***, էջ 215-388; **Евагрий Схоластик,** кн. II, гл. I-IV էջ 104-125:

պատմական վավերագրերի վերլուծությամբ փաստվում է, որ 395-550-ական թվականներին Մեծ Հայքում է՛լ ավելի արտահայտված է եղել Սասանյանների կողմից բռնի կերպով իրականացվող կրոնական հարկադրանքի ուժգացման քաղաքականությունը:

Ընդ որում, ձգտելով Հայաստանում արմատավորել զրադաշտական կրոնը, Սասանյանները փորձել են լուծել իրենց աշխարհաքաղաքական առանցքային խնդիրը՝ Բյուզանդիայի դեմ պայքարում ունենալ կրոնական և մշակութային առումով «հավատակից» հայերի աջակցությունը, որով կապահովվեր նաև պետության առաջատար դերը Առաջավորասիական և Մերձավոր Արևելյան տարածաշրջանում: **Փոխվում էին Սասանյան գահակալները**, **բայց անփոփոխ էր կրոնաքաղաքական այդ դիրքորոշումը**: Սասանյաններն այդ գործում իրենց լծակից էին դարձրել նաև Հայոց եկեղեցու «ասորական տարրը» (Սուրմակ, Բրքիշո, Ծմուել), ինչպես նաև պարսից պետական հովանավորությամբ գործող Տիզբոն-Սելևկիայի նեստորական ասորի քրիստոնեական եկեղեցին[20]: Եվ քանի որ պարսիկներն այդ պայքարում գլխավոր խոչնդոտ էին համարում Հայոց եկեղեցին[21], այդ պատճառով խնդիրը վերջնական լուծելու և հայերին կրոնափոխ անելու համար Հազկերտ II-ը հրապարակեց դավանափոխության հրովարտակը[22]: Այդպես հրամայական դարձավ հայ ժողովրդի ազգային դիմագիծը պահպանելու պահանջը, հանուն որի ժողովուրդը պատրաստ էր ցանկացած զոհաբերության: Հայոց եկեղեցին դարձավ հայ ժողովրդի շահերի և պահանջների արտահայտիչը, ազգի մեջ սերմանեց անհատի և ազգության ազատության զգացումը և հայրենիքի սերը, հանուն որի հայ ժողովուրդը չխնայեց ոչինչ, նույնիսկ՝ կյանքը:

Այդ հենքի վրա խարսխվեցին նաև «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» Վարդանանց և Վահանանց պատերազմները, որոնք պարսից կրոնական հարկադրանքի դեմ ուղղված համախմբված համազգային ելույթ էին, պայքար՝ հանուն դավանանքի և խղճի ազատության: Այդ ճանապարհով հայ ժողովուրդը տապալեց կրոնափոխելու և ձուլելու պարսից փորձը, որով մեկ անգամ ևս ապացուցեց, որ ոչ միայն իսկապես քրիստոնյա, այլև իր անցյալն ու հայրենիքը ճանաչող ու ջերմորեն սիրող ազգ էր, որի մեջ մշտապես վառ է ազատության ձգտումը: Այդպիսով, **հայ ժողովրդի երկարաև պայքարը պակվեց հաջողությամբ և**

---

[20] Տե՛ս **Տեր-Մինասյան Ե.**, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորոց եկեղեցիների հետ, էջ 53: Այդ գործընթացի մեկ այլ պատճառ է համարվում հայ թարգմանչաց դպրոցի ղեկավարների բյուզանդական կողմնորոշումը, **նույն տեղում**: Տե՛ս **Մելքոնյան Հ.**, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Երևան, 1980, էջ 218-242:

[21] Տե՛ս **Еремян С.,** Народно-освободительная война армян против персов в 450-455 гг., **"Вестник древней истории"** № 4, Л., 1951, էջ 46: Տե՛ս **Rawlinson G.**, The Seven Great Monarchies of the Ancient Eastern World, Parthia, New Persia. Vol. 3, էջ 405:

[22] Տե՛ս **Եղիշե**, էջ 18:

**ձախողվեց հայերին կրոնափոխ անելու և Հայաստանը պարսկական սովորական մարզ դարձնելու Սասանյանների ծրագիրը**:

Ու թեպետ հայ ժողովուրդը կորցրեց անկախ պետականությունը և հակապարսկական պայքարում ծանր կորուստներ ունեցավ, այդուհանդերձ **կարողացավ անխոցատ պահպանել քրիստոնեական կրոնը և դրանով օրինակ ծառայեց Արևելքի հավատակից մյուս ժողովուրդների համար**:

**Երրորդ՝ «Հայոց եկեղեցու պաշտոնական բաժանումը քաղկեդոնական եկեղեցուց (Դվինի 506 և 554/555 թթ. ժողովները)» ենթագլխում** ցույց է տրվում, որ Հայաստանում պարսկա-բյուզանդական տևական հալածանքներն այդպես էլ ի զորու չեղան երկրում կրոնի արմատական որևէ փոփոխություն առաջ բերել, որը բացատրվում է Հայոց եկեղեցու դավանական դիրքորոշմամբ: Այդ գործում չափազանց կարևոր նշանակություն է ունեցել «թարգմանչաց շարժումը», որն «... իր հիմքում ունեցել է հայրենիքի անկախությանն ու հայ ժողովրդի ինքնուրույնությանը ծառայելու բուռն տենչը: Այդ տենչից է առաջացել ազգային եկեղեցի, ազգային լեզու և գրականություն ստեղծելու իրողությունը, որ դարեր շարունակ հայ ժողովրդի ինքնապահպանության և ինքնուրույն զարգացման վառ փարոսն է եղել»[23]: Համահունչ մոտեցմամբ ատենախոսության մեջ մերժվում են շրջանառվող անհիմն այն տեսակետները, թե իբր Հայոց եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքորոշման հիմքում ընկած է եղել քաղաքական գործոնը[24], եկեղեցու նեղ-ազգայնական բնույթը[25], հայ հոգևոր դասի լեզվամտածողության անբավարար մակարդակը[26], անիրազեկությունը[27] և այլն:

Աշխատանքում հիմնավորվում է, որ Հայոց եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքորոշումը վերջնական տեսք է ստացել VI դարի Դվինի տեղական ժողովներում: Դվինի 506 թ. I ժողովում Հայ Առաքելական եկեղեցին անվերապահ մերժել և

---

[23] **Տեր-Մինասյան Ե.**, Հայոց Եկեղեցին, էջ 56-57:

[24] Տե՛ս **La Narratio de rebus Armeniae** (ed. critique et commentaire par G. Garitte), էջ 35, 158-163), **Վրաց աղբյուրներ**, էջ 34-47), **Православный Палестинский Сборник.** Т. XI, вып. 1, էջ 179-210): Տե՛ս նաև **Болотов В.,** Лекции по истории древней Церкви. Т. IV, էջ 322-324; **Карташев А.,** Вселенские соборы, էջ 398-401: Ըստ էության մերձ է նաև Մ. Աբեղյանի տեսակետը, տե՛ս **Աբեղյան Մ.,** Հայոց հին գրականության պատմություն, հ. Ա, Երևան, 1944, էջ 99:

[25] Տե՛ս **Поснов М.,** История христианской Церкви (до разделения Церквей - 1054 г.), էջ 422-424:

[26] Տե՛ս **Dulaurier E.,** Histore Dogmes, traditions et Liturgie de L'Eglise Armenienne orientale, Paris, 1855, էջ 21, տե՛ս նաև **Карташев А.,** Вселенские соборы, էջ 401:

[27] Տե՛ս **Գելցեր Հ.,** Համառոտ պատմութիւն հայոց, Վիեննա, 1897, էջ 48-49, **Հացունի Վ.**, Կարեւոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ պատմութիւնէն, Վենետիկ, 1927, էջ 361-362, **Weber S.,** Die katholische Kirche in Armenien: ihre Begrundung und entwieklung vor der Trennung, Freiburg, 1903, էջ 487, 499:

դատապարտել է նեստորականությունը, ինչպես նաև նրան «սնուցող» քաղկեդոնականությունը: Իսկ Հուստինիանոս I կայսրապապական քաղաքականության միանգամայն հիմնավոր պատասխանը հանդիսացել է Դվինի 554/555 թ. II ժողովը, որը ոչ միայն դատապարտեց և նզովեց նեստորականությունը, այլև՝ կապերը խզեց քաղկեդոնական եկեղեցու հետ: Փաստվում է նաև, որ եկեղեցական այս ժողովների որոշումները կապված էին նաև հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման հիմնախնդրի հետ:

Հիմնավորվում է, որ «եփեսոսյան մաքառումների հնոցով» (Ն. Ադոնց) անցած Հայ եկեղեցու կողմից քաղկեդոնականության մերժումը ունեցել է դավանական խոր արմատներ և շաղկապվել է եղել եկեղեցական ավանդական ուղղադավանության հետ: Քաղկեդոնականության մերժվել է նաև «կայսերական եկեղեցու»՝ Կ. Պոլսի աթոռի հավակնություններին հակադրվելու և Հայոց եկեղեցու անկախությունը պահպանելու համար: Եվ քանի որ Բյուզանդիան և Պարսկաստանը կրոնն օգտագործում էին քաղաքական նպատակներով, համարժեք է եղել նաև Հայոց եկեղեցու պատասխանը:

**Երկրորդ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ 550-640-ԱԿԱՆ ԹԹ. ՊԱՐՍԿԱ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ» գլուխը** բաղկացած է 3 ենթագլխից:

**Առաջին՝ «Պարսկա-բյուզանդական քաղաքականությունը Հայաստանում VI դարի երկրորդ կեսին» ենթագլխում** ցույց է տրվում, որ նշված շրջանում Պարսից արքունիքը կրկին որդեգրեց հայերին հալածելու և զրադաշտականություն պարտադրու քաղաքականությունը, ինչը հիմք դարձավ հայոց ազատագրական նոր շարժման համար:

Ապստամբության գլուխ կանգնեցին Վարդան Մամիկոնյանը և Հովհաննես Գաբեղենացի (557–574) կաթողիկոսը: Ապստամբները դիմեցին նաև Բյուզանդիայի օգնությանը և 570 թ. աշնանը կնքվեց հայ-բյուզանդական դաշինք[28]: Սակայն Բյուզանդիան դրանով լոկ փորձ կատարեց պարսից դեմ օգտագործել Մարզպանական Հայաստանի իրադարձությունները[29], որի հետևանքով ապստամբությունը վայրէջք ապրեց, իսկ Կ. Պոլիս տեղափոխված Վարդան Մամիկոնյանը, իր կողմնակիցները և Հովհաննես կաթողիկոսը ենթարկվելով Հուստինոս II կայսեր հարկադրանքին, քաղկեդոնականություն ընդունեցին: Հայ-բյուզանդական

---

[28] Տե՛ս **ՀԺՊ** հ II, էջ 254-256, **Լեո**, Հայոց պատմություն, հ. Բ (Միջին դարեր), էջ 202:

[29] Տե՛ս **Իսկանյան Վ.,** Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., էջ 249-250, 252: Հմմտ.՝ **Евагрий Схоластик,** Церковная история, Кн. V, гл. 7, էջ 352-353:

եկեղեցական այդ միությանը պաշտոնական տեսք ստացավ Կ. Պոլսում գումարված ժողովում[30]:

Իրավիճակը է՛լ ավելի սրվեց, երբ Հայաստան ուղարկվեց Բյուզանդական արևելյան բանակի գլխավոր հրամանատար Մավրիկիոսը, ով բռնի տեղահանելով՝ Կիպրոսում վերաբնակեցրեց շուրջ 10.000 հայերի[31]: Հետագա ռազմական բախումներն ընթացան փոփոխակի հաջողություններով և Հայաստանը հերթական անգամ ասպատակվեց[32]:

Երբ Բյուզանդական գահ բարձրացավ Մավրիկիոսը (582-602), նա խիստ բացասական ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի ճակատագրի վրա: 591 թ. կնքված պարսկա-բյուզանդական հաշտության պայմանագրով Հայաստանի մեծ մասն անցավ Բյուզանդիային, որտեղ Մորիկը իրականացրեց հակահայկական վարչական, եկեղեցական և ռազմական քաղաքականություն: Նա փորձեց նաև քաղկեդոնականություն արմատավորելով Հայոց եկեղեցին ենթարկել Բյուզանդական եկեղեցուն, ինչը նաև քաղաքական շահեր էր հետապնդում, քանի որ հայերին քաղկեդոնականացնելու միջոցով կայսրությունը ոչ միայն կամրապնդեր իր արևելյան քաղաքականությունը, այլև կիրագործեր Հայաստանի ձուլումը:

Եվ եթե Մորիկի վարչական բարեփոխումները նպատակ էին հետապնդում երկիրը ձուլել կայսրությանը, ապա կրոնական քաղաքականությամբ նա ձգտում էր իրականացներ հայերի ազգային խառնաստրումը հունական տարրի մեջ: Խրախուսվելով այն բանից, որ Փոքր Հայքի հայկական թեմերը արդեն ենթարկվել էին հունական մետրոպոլիտներին, կայսրը Հայաստանի բյուզանդական մասում քաղկեդոնական կաթողիկոս կարգեց Հովհաննես եպիսկոպոսին և այդ հակաթոռության իրավասությանը ենթարկեց ողջ բյուզանդական Հայաստանը: Դրանով Հայաստանում դրվեցին դավանական և եկեղեցական երկպառակության հիմքերը:

**Երկրորդ՝ «Վրաց եկեղեցու անջատումը Հայոց եկեղեցուց» ենթադրությունը** ցույց է տրվում է, որ VII դարասկզբին Վրաց եկեղեցու հետ տեղի ունեցած ընդհարումը ունեցել է կրոնական և քաղաքական հետևանքներ, ինչը հարևան երկրների միջև հարաբերությունների խզման ու թշնամանքի պատճառ է դարձել:

Փաստվում է, որ թեև վրաց աղբյուրները ժամանակաշրջանի հայ-վրացական եկեղեցական հարաբերությունները ներկայացնում են ծուռ հայելու մեջ, այդուհանդերձ, ակամա հավաստում են նաև, որ աթոռների միջև գոյություն է ունեցել

---

[30] Տե՛ս **ՀԺՊ** հ II, էջ 258: Տե՛ս նաև **La Nararatio de rebus Armeniae** (ed., critique et commentaire **Garitte G**.), էջ 465:

[31] Տե՛ս **Աստրական աղբյուրներ**, էջ 436:

[32] Տե՛ս **Իսկանյան Վ.,** Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., էջ 315:

սերտ կապ, և որ իրենց ուղղադավանությամբ աչքի ընկնող հայոց կաթողիկոսները անգամ կաթողիկոս են հռչակվել Վրաստանում,[33]: Այդ կապի անհերքելի փաստերից է նաև այն, որ Դվինի 506 թ. ժողովում Վրաց եկեղեցին նույնպես նզովել է նեստորականությունը և քաղկեդոնականությունը: Մեկ այլ վկայություն է այն, որ 598/599 թ. վրաց նվիրապետի մահից հետո, «նախնի սովորության համաձայն» վրաց իշխանները դիմել են Հայոց կաթողիկոսին[34], խնդրելով իրենց համար նոր կաթողիկոս ձեռնադրել: Եվ Մովսես Եղիվարդեցի հայոց կաթողիկոսը Վրաց կաթողիկոս է ձեռնադրել իր եպիսկոպոսներից ազգությամբ վրացի Կյուրիոնին և ուղարկել է Վրաստան[35]:

Բայց կարճ ժամանակ անց Կյուրիոնը, ով «գրով» և պատգամավորների միջոցով խոստացել էր հավատարիմ մնալ հայ-վրացական դավանական միությանը[36], դրժել է խոստումը և սկզբում ծածուկ, իսկ Մովսես կաթողիկոսի մահից հետո բացահայտ ընթացել է Վրաստանում քաղկեդոնականություն հաստատելու ճանապարհով, որն ունեցել է նաև քաղաքական հետևախորք, քանի որ Արևելավրացական թագավորության կորստից հետո վրացիները քաղաքականապես կողմնորոշվել էին դեպի հավատակից Բյուզանդիա[37]: Վրաց պատմագրությունը փորձում է Կյուրիոնին արդարացնել նրանով, որ նաև օգտվելով Մովսես կաթողիկոսի ծանոթությունից, «... կյանքի կանոններին և սուրբ գրքի իր խոր իմացությանը համապատասխան, ինչպես հանդիսատես մի կողմ է քաշվել, իրենից հեռու է վանել դավերը և դրանց մեջ ոչ մի մասնակցություն չի ունեցել: Եվ որ «հոգու խորքում խորապես ուղղափառ լինելով», նա խոնարհաբար ծառայել է եկեղեցական մի կառույցի, որը պատրաստվում էր պայքար սկսել իր մայր կաթողիկե եկեղեցու դեմ»[38]:

---

[33] **Гобронъ** (Михаилъ) **Сабининъ**, Исторія Грузинской Церкви до конца VI вѣка, СПб., 1872, с. 53.

[34] Տե՛ս **Ուխտանես**, էջ 511, **Ակինեան Ն.**, Կիւրոն կաթողիկոս վրաց: Պատմութիւն հայ-վրացական յարաբերութեանց յեօթներորդ դարու մէջ, էջ 171:

[35] Տե՛ս **Ուխտանես**, էջ 511, **Гобронъ** (Михаилъ) **Сабининъ**, Исторія Грузинской Церкви до конца VI вѣка, էջ 109-110: Հակադիր մոտեցման մասին տե՛ս **Цинцадзе К., свящ**. Автокефалия Церкви Грузинской (Историческій очерк VI-IX вв.). Тифлисъ, 1905, էջ 14, 19:

[36] **Գիրք Թղթոց**, էջ 164, **Ակինեան Ն.**, Կիւրոն կաթողիկոս վրաց: Պատմութիւն հայ-վրացական յարաբերութեանց յեօթներորդ դարու մէջ, էջ 172:

[37] Տե՛ս **Джавахов И.,** Исторія церковнаго разрыва между Грузіей и Арменіей въ началѣ VII вѣка. **"Известия Императорской Академии Наук"**, СПб., 1908, էջ 524-525, 527: Տե՛ս նաև **Վարդանյան Վ.**, Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, էջ 278:

[38] **Նույն տեղում**, էջ 111-112:

Ատենախոսը մատնանշում է, որ **այդ ամենը հավատելով վրաց հեղինակները չեն նկատում տարրական այն իրողությունը, որ նման նկարագիր ունեցող Կյուրիոնը պարզապես ներկայացվում է որպես ոմն մեկը, ում կյանքն ու գործունեությունը անցել է եկեղեցու կողմից անվերապահ արգելված խաբեության մեջ**:

Վրաց եկեղեցու կողմից քաղկեդոնական դավանանք ընդունելու պատճառով էլ տեղի է ունեցել Հայոց և Վրաց եկեղեցիների պաշտոնական բաժանումը: Ու թեև Հայոց եկեղեցու համար մեծ կորուստ էր վրացիների հետ եկեղեցական հարաբերության խզումը, այդուհանդերձ, Դվինի 609/610 թ. եկեղեցական ժողովը «քաղկեդոնական Վրաց եկեղեցին համարել է Հայոց եկեղեցուց բաժանված» և զրկել է հաղորդությունից: Այդ որոշմանը համահունչ Աբրահամ կաթողիկոսի շրջաբերականը «նզովքի» սպառնալիքով հրահանգել է հայերին հարաբերությունները խզել վրացիների հետ:

**Երրորդ՝ «Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ վարվող պարսկաբյուզանդական քաղաքականությունը մինչև Սասանյանների մայրամուտ» ենթագլխում** ցույց է տրվում, որ անանախադեպ վերելք ապրող Սասանյան Պարսկաստանի զորքերը 608 թ. սկսած մեկը մյուսի հետևից նվաճեցին հայկական բոլոր տարածքները: Գերության մեջ մահացավ քաղկեդոնական Հովհաննես Բագարանցի կաթողիկոսը, որով վերջ տրվեց նաև Հայոց եկեղեցու հակաթոռ կաթողիկոսությանը[39]: Այնուհետև զարգացնելով հաջողությունը պարսկական զորքը 611-613 թթ. ընթացքում նվաճեց Ասորիքը՝ Անտիոք մայրաքաղաքով, ապա նաև Փոքր Ասիական տարածքները և Դամասկոսը, իսկ 614 թ.՝ նաև Երուսաղեմը, որը մեծ կորուստ էր ողջ քրիստոնյա աշխարհի համար[40], քանի որ պարսիկները ռազմավարի հետ Տիգբոն տեղափոխվեց նաև Քրիստոսի խաչափայտը:

Երուսաղեմի գրավումից հետո Խոսրով Փարվեզը գրավյալ տարածքների հոգևոր ներհակությունը հաղթահարելու նպատակով միջամտեց նաև հպատակ քրիստոնյաների դավանաբանական վեճերին: 614 թ. հետո նրա կողմից հրավիրված Պարսից ժողովը, բուռն քննարկումներից հետո մերժեց քաղկեդոնական դավանանքը և վերահաստատեց առաջին երեք տիեզերական ժողովների դավանությունը: Խոսրով արքայի

---

[39] Տե՛ս **Լեո**, Հայոց պատմություն, հ. Բ (Միջին դարեր), էջ 235, **Իսկանյան Վ.**, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., էջ 428:

[40] Տե՛ս **Успенский Ф.,** История Византийской империи VI-IX вв., էջ 426-427: Տե՛ս նաև **Սեբեոս**, էջ 155, **История Византии в трех томах**, Т. I, էջ 364-366; **Острогорский Г.,** История Византийского государства, էջ 144:

հրամանով «ուղիղ ճանաչվեց Հայոց հավատը»[41], որը հռչակվեց որպես պարսից հսկայածավալ պետության համար ընդունելի և միակ ճշմարիտ քրիստոնեական դավանանք: Դա քրիստոնեական Արևելքում Հայ եկեղեցու ուղղադավանության ճանաչման վկայությունն էր: Այնուհետև խոսրով արքան շարունակեց ռազմական գործողությունները և թվում էր, թե վերածնվում է Աքեմենյան տերությունը[42]:

Սակայն Հերակլ կայսրն անձամբ ստանձնելով բյուզանդական բանակի հրամանատարությունը, կարողացավ հակապարսկական պայքարում ձեռք բերել նաև Արևելյան քրիստոնյա ազգերի աջակցությունը: 623-628 թթ. ընթացքում կայսերական զորքը պարսիկներից ետնվածեց գրավյալ բոլոր տարածքները, ներխուժեց Պարսկաստան և գլխովին ջախջախեցին պարսից բանակը: 629 թ. կողմերի միջև հաշտություն կնքվեց, որով վերականգնվեց 591 թ. պայմանագրի դրությունը:

Կայսրության տարածքային ամբողջականությունը վերականգնելուց հետո Հերակլը ևս փորձեց հաղթահարել Արևելքի դավանական պառակտումը: Հռչակվեց «միակամության» բանաձևը, որը 634 թ. դարձավ Բյուզանդիայի պաշտոնական դավանանքը[43]: Այն չէր մերժում քաղկեդոնականությունը, բայց քայլ էր դեպի հակաքաղկեդոնիկ եկեղեցիներ: Քաղաքական դաշնակից դարձնելու միտումով Կայսրը փորձեց մերձեցնել նաև Հայոց և Բյուզանդական եկեղեցիները: 632 թ. Կարնո ժողովի մասնակից հայ հոգևորականները Եզր կաթողիկոսի գլխավորությամբ ընդունեցին միակամության «հաւատոյ խոստովանութիւնը»[44]: Բայց այդ ամենով հանդերձ Հայոց եկեղեցին հավատարիմ մնաց իր հակաքաղկեդոնական դիրքորոշմանը:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ** ներկայացվում են ատենախոսության հիմնական արդյունքներն ու հետևյալ եզրահանգումները.

- Բյուզանդական կայսրության ձևավորումից մինչև VI դարի 50-ական թվականների վերջը քրիստոնեական այս տերության կողմից Հայաստանի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը աստիճանական փոփոխության է ենթարկվել խաղաղ գործակցությունից դեպի բացահայտ կրոնական հարկադրանք: Դրա կրոնաքաղաքական պատճառը եղել է Բյուզանդական կայսրերի աջակցությամբ Արևելքի բոլոր

---

[41] **Ասողիկ**, էջ 700: Տե՛ս նաև **Տեր-Մինասյան Ե.**, Այսպես կոչված պարսից ժողովը, էջ 50-52, **Пигулевская Н.,** Византия и Иран на рубеже VI и VII веков, էջ 236:

[42] Տե՛ս **Острогорский Г.,** История Византийского государства, էջ 144:

[43] Տե՛ս **Իսկանյան Վ.**, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., էջ 443-444, **Острогорский Г.,** История Византийского государства, էջ 159:

[44] Տե՛ս **Քրիստոնյա Հայաստան**, Հանրագիտարան, էջ 291-292, 478:

եկեղեցիներն իրեն ենթարկելու Կ. Պոլսի պատրիարքության հավակնությունը:

- 395-550-ական թվականներին ազդեցիկ է եղել նաև Մեծ Հայքում Սասանյանների կողմից իրականացվող կրոնական հարկադրանքի և բռնի ուծացման քաղաքականությունը: Սասանյանները դրանով ձգտել են լուծել իրենց աշխարհաքաղաքական առանցքային խնդիրը՝ Բյուզանդիայի դեմ պայքարում ունենալ կրոնա-մշակութային առումով հավատակից հայերի աջակցությունը, որով կապահովվեր նաև պետության առաջատար դերը Առաջավորասիական և Մերձավոր Արևելյան տարածաշրջանում: Այդ պայքարին լծակից են դարձրել նաև Հայ եկեղեցու «ասորական տարրը», ինչպես նաև Սասանյանների հովանին վայելող նեստորական եկեղեցին:
- Արտաքին գործոնների հարկադրանքով հայոց ազգային դիմագծի պահպանումը սերտորեն կապվեց կրոնի և եկեղեցու հետ: Ազգի մեջ սերմանելով ազատության զգացումը և հայրենիքի սերը, Հայոց եկեղեցին դարձել է նաև ժողովրդի պահանջների և շահերի արտահայտիչը, որի վկայությունը հանուն դավանանքի և խղճի ազատության և ընդդեմ կրոնական հարկադրանքի համազգային Վարդանանց և Վահանանց պատերազմներն էին: Դրանով հայ ժողովուրդն ապացուցեց, որ ազատության ձգտում ունեցող և իր անցյալն ու հայրենիքը ճանաչող ու ջերմորեն սիրող քրիստոնյա ազգ է:
- VI դարի Դվինի ժողովները հակահայ կրոնական քաղաքականության օրինաչափ պատասխանն էր: Դվինի 506 թ. I ժողովում Հայոց եկեղեցին անվերապահ դատապարտեց նեստորականությունը և նրան «սնուցող» քաղկեդոնականությունը: Իսկ Դվինի 554/555 թ. II ժողովի որոշումներին հետամուտ Հայոց եկեղեցին կապերը խզեց քաղկեդոնականության հետ: Ընդ որում, քաղկեդոնականության մերժումը ունեցել է դավանական խոր արմատներ և բխել է ուղղադավան եկեղեցական ավանդությունից:
- Վրաց աղբյուրները թեև IV-VII դարերի հայ-վրացական եկեղեցական առնչությունները ներկայացնում են ծուռ հայելու մեջ, ակամա հավաստում են նաև, որ աթոռների միջև գոյություն է ունեցել սերտկապ, որի անհերքելի փաստերից է հայոց Մովսես Եղիվարդեցի կաթողիկոսի կողմից Կյուրիոնին Վրաց կաթողիկոս ձեռնադրելը: Բայց Կյուրիոնը ընթացել է Վրաստանում քաղկեդոնականություն հաստատելու ճանապարհով, որի պատճառով 609/610 թ. Դվինի եկեղեցական ժողովը «քաղկեդոնական Վրաց եկեղեցին համարել է Հայոց եկեղեցուց բաժանված» և զրկել է հաղորդությունից: Ժողովի որոշմանը համապատասխան Աբրահամ կաթողիկոսի շրջաբերականը «նզովքի» սպառնալիքով հայերին հրահանգել է հարաբերությունները խզել վրացիների հետ:

• VII դարի առաջին կեսի պարսկա-բյուզանդական պատերազմում հաղթական նվաճումներին զուգընթաց Խոսրով Փարվեզ արքան միջամտել է նաև հպատակ քրիստոնյաների դավանաբանական վեճերին և Պարսից ժողովի որոշումներին համապատասխան «ուղիղ է ճանաչել Հայոց հավատը» և այն հռչակել է որպես պարսից հսկայածավալ պետության համար ընդունելի միակ ճշմարիտ դավանանք: Սակայն Հերակլ կայսեր կողմից պարսկական բանակի ջախջախումից հետո, երբ գրեթե ողջ Հայաստանը կրկին անցավ Բյուզանդիայի ենթակայության տակ, Հայաստանը քաղաքական դաշնակից դարձնելու միտումով կայսրը փորձել է միավորել Հայ և Բյուզանդական եկեղեցիները: 632 թ. Կարնո ժողովում հայոց Եզր կաթողիկոսը և նրան ուղեկցող եպիսկոպոսներն ու վարդապետները վավերական են ճանաչել միակամության «հաւատոյ խոստովանութիւնը»: Բայց Հայոց եկեղեցին հավատարիմ է մնացել իր հակաքաղկեդոնական դիրքորոշմանը:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝**

1. Դվինի առաջին (506 թ.) և երկրորդ (554/555 թ.) եկեղեցական ժողովներն ու դրանց ընդունած որոշումները, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2017, թիվ 3, էջ 151-161:

2. Զրադաշտականությունը և հայերին հավատափոխելու նրա փորձերը (IV-V դդ.), Կանթեղ, Երևան, 2018, թիվ 1, էջ 124-132:

3. Պարսկա-բյուզանդական քաղաքականությունը Հայաստանում VI դարի երկրորդ կեսին, Ակունք, Երևան, 2018, թիվ 1, էջ 84-96:

4. Վրաց եկեղեցու անջատումը Հայոց եկեղեցուց, Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու, Երևան, 2018, էջ 266-278:

5. Պարսկա-բյուզանդական քաղաքականությունը Հայ առաքելական եկեղեցու հանդեպ VII դարի առաջին կեսին, ՀՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2018, թիվ 1, էջ 93-108:

6. On the doctrinal and political relations between Armenia and the Byzantine Empire in V century, Բանբեր հայագիտության, Երևան, 2018, թիվ 1, էջ 5-14:

**ТЕР-ГРИГОРЯН АРМЕН АРАЕВИЧ**

**АРМЕНИЯ В СФЕРЕ ВЕРОУЧИТЕЛЬНОЙ ПОЛИТИКИ ВИЗАНТИЙСКОЙ ИМПЕРИИ**

## И РЕЛИГИОЗНОЙ ПОЛИТИКИ САСАНИДСКОЙ ПЕРСИИ (395-642)

Диссертация на соискание ученой степени кандитата исторических наук по специальности 07.00.01 "История Армении".

Защита состоится 16-го июля 2018 г., в $13^{00}$ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА
(0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

**РЕЗЮМЕ**

Диссертация посвящена системному анализу вероучительной политики Византийской империи и религиозной политики Сасанидской Персии в Армении в 395-642 гг. Диссертация состоит из введения, двух глав, заключений и списка первоисточников и использованной литературы. Во введении обосновывается актуальность, научная значимость, теоретическое и практическое значение исследуемой темы, выявлена степень изучения исследуемой проблемы, оформлены цели и задачи исследования, обоснованы хронологические границы и выявлены методологические основы исследования, обоснована научная новизна работы и дан обзор источников и литературы.

В первой главе диссертации – «Вероучительная и религиозная политика Византии и Персии в Великой Армении 395-550 годах» - на основе анализа первоисточников и фактического материала показывается, что под влиянием религиозных факторов политика Византийской империи в отношении Армении постепенно изменилась от мирного сотрудничества к откровенному политико-религиозному принуждению. Аргументируется также, что в 395-550 годах была еще более выраженной политика религиозного принуждения и насильственного отчуждения Сасанидов в Великой Армении. Тем самым Сасаниды пытались решить ключевую для них геополитическую проблему – в борьбе против Византии получить «единоверных» армян. Для этой цели персы использовали также «ассирийский элемент» Армянской церкви и действующая под государственным покровительством несторианская ассирийская христианская церковь Ктесифон-Селевкии. Обосновывается, что под воздействием этих внешних факторов сохранение национальных черт армянского народа, тесно связалось с религией и церковью, поскольку Армянская церковь не только стала духовной и идеологической опорой страны, но и смогла посеять чувство свободы личности и нации и любовь к родине. Церковь также стала основой идентификации нации, объединения армянского народа и организации освободительных войн против персидского религиозного принуждения, которые были борьбой ради свободы совести. Обосновывается также объективный характер антихалкидонской позиции Армянской церкви, что был связан с христианской традиционной доктриной и имел вероучительное глубокое обоснование. Свидетельством является церковное собрание Двина в 506 г., где Армянская церковь безоговорочно осудила несторианство, а также «питающее» ее халкидонство. Эта позиция заново была утверждена в церковном собрании Двина в 554/555 г., после чего Армянская церковь официально прервала связи с халкидонством.

Во второй главе диссертации – «Армения и Армянская церковь во время персидско-византийских войн в 550-640-х годах» - показано, что во второй половине VI века Армения продолжала подвергаться вероучительным и религиозным принуждениям со стороны Византии и Персии. В 562 г. Персия снова выдвинула принуждение зороастризма, что стало основой нового освободительного движения. Византия попыталась использовать эти события и при первой же возможности снова выдвинула принуждение халкидонства. А император Маврикий предпринял решительные шаги, направленные на укоренение халкидонства в Армении.

Показывается также, что примерно трехстолетний союз Армянских и Грузинской церквей был разрушен вследствии религиозной политики грузинского католикоса Кюриона, кто провозглавил халкидонство официальным вероучением в Грузии. Из-за этого в 609/610 г. церковное собрание Двина «посчитало халкидонскую Грузинскую церковь отделенной от Армянской церкви» и лишило причастия. Соответствующим распоряжением католикоса, армянам было приказано разорвать все отношения с грузинами.

Показывается также, что в первой половине VII века на этапе персидско-византийских войн, после захвата Иерусалима, Хосров Парвиз вмешался также в вероучительные споры подвластных христиан. Созванное им Персидское собрание после бурных дискуссий отвергло халкидонское вероучение и «православной признало армянскую веру» внутри персидского государства. А после того, как император Ираклий восстановил состояние договора 591 г. и почти вся Армения снова перешла под управление Византии, он попытался воссоединить Армянское и Византийское церкви. В 632 г. на Каринском собрании армяне признали “монофелизм” православной, однако остались верными антихалкидонской позиции.

В заключениях приведены основные итоги диссертации, которые будут представлены к защите.

## TER-GRIGORIAN ARMEN A.

# ARMENIA IN THE CONTEXT OF THE CONFESSIONAL POLICY OF THE BYZANTINE EMPIRE AND THE RELIGIOUS POLICY OF THE SASANIAN PERSIA (395-642)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of “History of Armenian” 07.00.01

The defense of the dissertation will be held on July 16, 2018,
$13^{00}$ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SCC RA
by the Institute of History of the National Academy of Sciences of RA
(0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

## SUMMARY

The dissertation is dedicated to the comprehensive analysis of confessional policy of the Byzantine Empire and the religious policy of the Sassanid Persia in Armenia from 395 to 642 AD. The dissertation consists of introduction, two chapters, conclusion and bibiliography. The scientific actuality and topicality of the theme is exposed in the introduction along with its theoretic and practical significance, the degree of research of the problem is revealed, the analytical goals and objectives of the research are formulated, the methodological foundations of the research are being studied, the schentific novelty of the analytical work is provided, the chronological boundaries of the research are given in addition to the review of the references and the literature.

First, in the chapter ‘The Confessional and Religious Policy of Byzantium and Persia in Greater Armenia from 395-550 AD’ the political and ecclesiastical relations between Armenia and the Byzantine Empire are discussed through the analysis of the original sources and historical records. It is shown that the policies of the Byzantine Empire against Armenia under the influence of religious factors have gradually changed to a clear political and religious compromise of peaceful co-operation. The study of original documents also confirms that from 395 to 550 the policy of religious coercion and violent assimilation by the Sasanians in Greater Armenia was even more evident. By doing this, the Sasanians have tried to solve the key geopolitical problem for them, to support the Armenians in religious and culturally "fellow" Armenians in the struggle against Byzantium. The ‘Assyrian elements’ of the Armenian Church, as well as the Assyrian Christian Church of Ctesiphon-Seleucia functioning under the auspices of the state also became part of that Persian policy. It is justified that all this made the imperative of keeping the national identity of the Armenian people closely associated with religion and church, as the Armenian Church not only became a spiritual and ideological support of the country, but also managed to sow the nation's sense of freedom and the identity of the homeland love. The church also became the basis for the identification of the nation, the unification of the Armenian people and the organization of liberation wars against the persian religious coercion, which were struggles for the sake of freedom of conscience. The analysis of factual material is also based on the objective nature of the anti-chalcedonian position of the Armenian Church. In principle, denying the distortionist claims made in christian literature and analytical literature on this issue, it is justified that the anti-chalcedonian position of the Armenian Church was related to the traditional christian doctrine and had a profound insight. The testimony is 506 Dvin the First Church Assembly in which the Armenian

Church has unconditionally denied and condemned nestorianism, and its "nourishing" Chalcedonism. This position has also been confirmed by the Second Assembly of Dvin 554/555, after which the Armenian Church officially broke ties with chalcedonism.

Secondly, " in the chapter titled "Armenia and the Armenian Church during the persian-byzantine wars, in the 550-640s.", the original analysis shows that in the second half of the 6th century Armenia was persecuted and prosecuted by Byzantine and Persia. In 562 after the 50-year agreement between Byzantine and Persia, Persia again put forward the compulsion of Zoroastrianism, which became the basis for a new liberation movement. Byzantium tried to use these events and at the first opportunity again put forward the compulsion of chalcedonism. Emperor Maurice took sharp steps to root chalcedonism in Armenia and subject the Armenian Church to the Byzantine Church.

Also it is shown that the confessional union between Armenian and Georgian Churches was ruined, which had been around for three centuries. The main initiator of this division was Georgian Catholicos Kyurion, who proclaimed chalcedonism as an official doctrine in Georgia. In 609/610 because of the fact that georgians officially chaired the chalcedonism, the new church assembly of Dvin considered "Chalcedonian Georgian Church separated from the Armenian Church" and deprived of the sacrament. According to the catholicosate prescript, Armenians were ordered to break the relations with the Georgians.

In dissertation It is also shown that in the first half of VII century, at the stage of the persian-byzantine wars, after the capture of Jerusalem Khosrow Parviz intervened in the dogmatic disputes of the christians. The Persian Assembly convened by him rejected the chalcedonic denomination after heated discussions and "recognized the Armenian faith directly in the Persian state. And after that when emperor Heraclius restored the conditions of the treaty dated 591, almost all Armenia went under the control of Byzantium. The emperor also tried to bring the Armenian and Byzantine churches closer together. In 632 during the church assembly of Karin, although acknowledged the "Monofelism", but they remained loyal to the anti-chalcedonian stand.

The conclusions contain the main results of the thesis, which will be submitted to the defense.